№ 131 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 24

1904

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ՃՐՆԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

№ 131 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 24

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի տգեղ սովորութիւն մեր գիւղերում. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նոր բաներներ մեր գրականութեան մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՏԳԵՂ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Յաւելով պէտք է խոստովանվել, որ մեզանում վատ սովորութիւններ խիստ շատ կան։ Դրանց միջից իր ՁԼասակար և աղետաբեր հետանքներով աչքի է ընկնում տարիքով անհամապատասխան զոյգերի և անչափահասների նշանն ու պսակը։

Ամուսնական հարցը կեանքի ամենակարևոր խնդիրներից մէկն է։ Ամուսնութեամբ է սկսվում ընտանիքը, իսկ ընտանիքներից կազմվում և գոյութիւն են առնում հասարակութիւններն ու ազգերը. ուրեմն այս վերջինների վիճակը միշտ կախված կը լինի ընտանիքի այս կամ այն դրութիւնից։ Եթէ ընտանիքն ամուր հիմքի վրա չէ դրված, եթէ ընտանիքի շէնքը կառուցված չէ փոխադարձ սիրոյ և հաւասարաչութեան վրա, ի՞նչ կը լինի ապա նրանից սկիզբ առնող աւելի մեծ ընտանիքի վիճակը.— Ի հարկէ, շատ աննախանձելի։ Ահա թէ ինչու ամուսնական խնդրի վրա կրթված ազգերի մէջ լուրջ ուշադրութիւն է դարձնվում։

Մեզանում, դժբախտաբար, այդ ամենաէական խնդրին շատ թեթևակի են վերաբերվում. ամուսնացող զոյգի փոխադարձ սէրը, գաղափարների նմանութիւնը ամենևին ի նկատի չեն առնվում։ Շատ անգամ մի որ և է արտաքին և ամուսնութեան տեսակէտից ոչ մի նշանակութիւն չունեցող հանգամանք, ինչպէս, օրինակ, նիւթական շահը, պաշտօն ստանալու յոյսը և այլն, խթան են լինում գաղափարներով հակառակ և բնաւորութեամբ տարբեր զոյգին պսակվելու։

Թէև քաղաքներում և փոքր ի շատ լուսաւորված վայրերում ներկայումս այդ կարգի ամուսնութիւններ համեմատաբար սակաւ են տեղի ունենում, բայց գիւղերում, որոնցից շատերում մի լրագիր էլ չէ ստացվում, այդ չարիքը խոր արմատներ ունի և դեռ և շարունակում է իր ՁԼասաբեր գոյութիւնը։

Մանաւորելով խօսքս մեր երեք գիւղերի մասին (Վեր. և Ներք. Ազաներ և Դեր), պէտք է ասեմ, որ այդ զզուելի իրողութիւնը մեզանում յաճախ կրնվող երևոյթներից մէկն է։

Ի հարկէ, ինչպէս ուրիշ գիւղերում, նոյնպէս և այստեղ, նշանվողներն իրանք չեն իրար ընտրողն ու հաւանողը. ծնողներն են նրանց բախտը տնօրինողը։ Թող նրանք որքան ուզում են լաց լինեն, արտասուք թափեն— ոչինչ՝ միշտ կը պատասխանեն. «Զահիլ է, խելքը չի կտրում, յետոյ կը կակղի և կը բարշի» (կը հաշավի)։ Եթէ ծնողները ցանկանում են իրանց որդու համար այս ինչ աղջկան նշանել, էլ որդին ո՞վ է, որ նրանց հակառակէ և դէմ կենայ։ Աւելի վատ աղջկայ կառակէ և դէմ կենայ։ Ամենի վատ աղջկայ համար. հայրը կամ տան մեծը, ձեռքից բռնած անելեզու կենդանու նման, տալիս է նրան իր ուզած տղային, տալիս է և ոչ ծախում, որովհետև մեր սովորութեան համաձայն աղջիկն է տղային փող տալիս։

Ի դէպ է այստեղ նկատել այն, որ մեզանում մի նոր և զզուելի սովորութիւն է մտնում։ Նշանի ժամանակ տղայի տէրը աղջկայ ծնողներից ոչինչ չէ պահանջում, սակայն պսակվելու ժամանակ նա սպառնում է չը տանել այդ օրիորդին, եթէ չը տրվի պահանջված փողը կամ հողը։ Ի՞նչ պէտք է անի խեղճ ծնողը. եթէ ունևոր է, երկար անհամութիւններից յետոյ, տալիս է՝ իր աղջկայ պատիւը պահելու և անունը չը հանելու համար. իսկ եթէ աղքատ է, պարտքով է նրան ճանապարհ դնում կամ ծախում իր ընտանիքի յոյս միակ հողը։

Որ ծնողներն են իրանց զաւակի բախտը որոշողը, որ նրանք են ընտրում իրանց աղջիկների համար փեսացուներ, իսկ տղաների համար հարսնացուներ, դրա գլխաւոր պատճառը տգիտութիւնն է, և մասամբ էլ այն հանգամանքը, որ մեզանում շատ վաղ են նշանը դնում, այնքան վաղ, որ յիրաւի նշանվողի խելքը ոչինչ չէ կտրում։

Մեր գիւղերում աղջիկը ծնողների համար մի չարիք է համարվում, իսկ աղջիկ ունենալը՝ մի դժբախտութիւն, որովհետև եթէ նա մինչև 15—16 տարեկան հասակը չը նշանվեց, թող իր յոյսը կտրէ, նրան նշանելու համար էլ ոչ ոք չի մօտենայ, քանի որ նրա ժամանակն անց է կացել, նա արդէն «պառաւել» է։

Այդ յիմար դրութիւնը, ինչպէս մի գործող օրէնք, ծնողներին ստիպում է իրանց աղջիկներից, այդ մեծ դժբախտութիւնից, որքան կարելի է շուտ ազատվել. և ահա դրանք այդ խեղճերին բանդում են (կապել մէկի գլխին) հէնց առաջին պատահողին, քանի դեռ 15—16-ի չեն մօտեցել։

Իսկ եթէ խեղճ աղջիկը 16 տարեկանից անցել, ուրեմն նա պառաւ է, իսկ պառաւը պէտք է ծերունու հետ ամուսնանայ։ Այդ է պատճառը, որ 60—70 տարեկան ծերունու մօտ տեսնում էք նրա 16—22 տարեկան «պառաւ» կնոջը։

Աւելի սովորական է անչափահաս զոյգերի նշանը։ Ծնողներն անհամբերութեամբ սպասում են, թէ երբ իրանց աղջիկը 7—8 տարին կը բոլորի, որ նշանեն և ազատվեն այդ հոգսից։ Ի՞նչ միջոցներ, ի՞նչ նուէրների խոստումներ աղջիկն այս կամ այն տղային տալու համար։ Եւ եթէ աջողվում է, 8—13 տարեկան երեխային նշանում են 18—20 տարեկան երիտասարդի հետ։

Միջանկեալ կերպով ասեմ, որ մեր գիւղերում մի նոր տեսակի նշանադրութիւն է առաջ եկել։ Որովհետև քահանաներին արգելվում է, և ուրեմն նրանք իրաւունք չունեն անչափահասների նշանն օրհնելու, ուստի և նշանը տանելիս քահանաներին չեն հրաւիրում։ Տղայի ծնողները և բարեկամները վերցնում են մատանի, քեամբ և խնջոյքի գինին ու գնում, նշանը դնում. էլ ոչ քահանայ և ոչ էլ «պահպանիչ»։

Յաճախ պատահում է, որ այդքան փոքրիկ աղջկան նոյն ձևով նշանում են զինուորական ծառայութիւնը վերջացրած 25—26 տարեկան երիտասարդի հետ։ Ինչպէս առաջին դէպքում, նոյնպէս և այստեղ, նշանվողները պէտք է սպասեն մինչև աղջկայ չափահաս դառնալը։ Այդ մի քանի տարվայ ընթացքում փեսայացուն շարունակ այցելում է իր դեռ երեխայ նշանածին, որ, ի հարկէ, շատ տգեղ բան է և մի և նոյն ժամանակ մեծ ծանրութիւն օրիորդի խեղճ ծնողների համար։

Յիշատակութեան արժանի է հետևեալ դէպքը. վերջերս այստեղ պատուաւոր համարվող մի պարոն բարեհաճում է նշանել իր անչափահաս աղջկան, որ դեռ սովորում էր գիւղի միդասեան դպրոցի բ. բաժանմունքում։ Խեղճ աղջիկն այլ ևս ի՞նչ երեսով գնար դպրոց. չէ՞ որ նրա ընկերները գիտեն այդ բանը և կը ծաղրեն նրան. ուստի և թողեց ուսումնարանը, իր հօր այդ բանի վարմունքին հակառակել չը համարձակելով։

Բնական է, որ այդպիսի հանգամանքներում, երբ ծնողների միակ նպատակն է աղջկան իրանց տնից հեռացնել, տղայի առողջութեան, բարոյականութեան մասին հարց լինել չէ կարող։ Տղայ է, ուրեմն կարելի է աղջիկ տալ։ Եւ երբեմն աղջիկը պսակվելուց մի քանի տարի չանցած, ինքն էլ իր ամուսնուց վարակվելով, անտէր-անտիրական մի երկու տարի տառապելուց յետոյ, մտնում է սև գերեզման, կեանքը դեռ ևս չը ճաշակած։

Սա և սրա նման տգեղ և զզուելի սովորութիւնները ե՞րբ պէտք է վերջանան։

Յակոբ

ՆԵՐՔԻՆ ԼՐԻՐԵՐ

Թագաւոր Կայսը, արդարադատութեան մինիստրի ամենահպատակ զեկուցման համաձայն, այս տարվայ յունիսի 13-ին, Ամենողորմածաբար բարեհաճեց հրամայել Թոյլատրել Թիֆլիսի նահանգի, Բօրչալուի գաւառի Համամլի գիւղի բնակիչ Էիւբ Ալլահվերդի օղլիի որդուն՝ Մէհտիին, և Տերեկի շրջանի, Սունժէնի բաժանմունքի Կանտիշև գիւղի բնակիչ Իբրահիմ Մուսիել Սապրալիևին և նոյն բաժանմունքի Բազարկենսկ գիւղի բնակիչ Աբլանբէկ Զանբօտով Խաշագուլգովին. նոյն բաժանմունքի Եկաժևսկ գիւղի բնակիչ Տօխու Զամատով Խասկիևին և Բէկ-Միրզա Աբակովին. նոյն բաժանմունքի ցօրինեան հասարակութեան անդամ Իսուպ Տատիևին և Մահմէդ Տատիևին. Թիֆլիսի նահանգի, Բօրչալուի գաւառի Կուսումլու գիւղի բնակիչ միլիցիայի պրապօրշչիկ Աստան-Աղա-Դաշդամուր Ագա-օղլի Կասումովին. նոյն գաւառի Դեմուրհասանլի գիւղի բնակիչ Շամիլ Օսման-օղլուն. Գանձակի նահանգի, Ղազախի գաւառի Տիխորի գիւղի բնակիչ Մաշադի Քեազմ-օղլուն և Երևանի նահանգի, Ալէքսանդրօպոլի գաւառի Սարալ գիւղի բնակիչ Համիդ Իսմայիլ-օղլուն —մտնել իբր ձիաւոր անդր կովկասեան ձիաւոր բրիգադայի մէջ, որ կազմակերպում է գեներալ-մայոր իշխան Օրբելեանը, այն պայմանով, որ մինչև այս Բարձրագոյն հրամանի ելը նրանց արած և յայտնված բոլոր ոճրագործական յանցանքների համար յիշած անձերի դէմ եղած քրէական դատերը դադարեցվին և նրանց վիճակը, Հեռաւոր Արևելքում պատերազմական գործողութիւնները վերջանալուց յետոյ, արդարադատութեան մինիստրի կողմից՝ զինուորական մինիստրի հետ յարաբերութեան մտնելուց յետոյ, յանձնվի Ամենողորմած Բարձրագոյն բարեհայեցողութեանը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐ ԲԱՆԵՐԵՐՆԵՐ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

II

«Բանբերի» այս երկրորդ գրքի գրականագեղարուեստական բովանդակութեան մասին մենք երկար չենք խօսի։ Արդէն առաջին գրքին նուիրած մեր յօդուածից ընթերցողը իմացած կը լինի, որ հանդէսը խմբագրվում է խնամքով, լաւ ընտրութեամբ և տալիս է ընթերցանութեան նիւթ։ Մասնաւորապէս երկրորդ գրքի վերաբերմամբ կարելի է ասել, որ նրա գեղարուեստական բաժինը առաջին գրքի հետ համեմատած՝ թոյլ է։ Գոնէ այստեղ այլ ևս չենք տեսնում «Կարմիր ժամուցի» նման գրուածքներ։

Պ. Ադոնց շարունակում է թիւրքահայ գրողներին լայն և առաջնակարգ տեղ տալ իր հանդէսի մէջ։ Այդ հանգամանքը մենք արդէն գնահատել ենք արժանաւոր կերպով. այստեղ կարիք չը կայ նորից վերադառնալու այդ՝ ամեն կողմով համակրելի երևոյթին։

Ամենից մեծ տեղ երկրորդ գրքի մէջ գրաւում է պ. Շանթի «Ես-ի մարդը» դրաման։ Բովանդակութիւնը հաղիւ թէ աջողվի մեզ այստեղ պատմել, թէկուզ համառօտ կերպով։ Կասենք միայն, որ նիւթը հետաքրքրական է՝ անցեալ համարի «Կարմիր ժամուցի» մէջ նրա կարագրված ուժեղ ու մեծ շարժումից է վերցրած։ Բայց այստեղ շարժման գաղափարը տիրող, ղեկավարող, դատող ու կշռող չէ պ. Շանթի համար։ Ընդհակառակն, նա, այդ գաղափարը, բաւական նսեմացրած է։ Պ. Շանթին հասարակական մի մեծ գործ հարկաւոր է եղել իբրև նիւթ՝ անհատական հոգեբանութեան մի հարց արծարծելու համար։

Իսկական հերոսը մի հատ է—Մուշեղ Տէրեանը, «Ես-ի մարդը», այսինքն մի մարդ, որ պատրաստ է աշխարհի ամեն մի սրբութիւն զոհել իր անհատական երջանկութեան։ Մնացած դէմքերը, որոնք շարժվում են այդ անձի շուրջը, շատ թոյլ ու անորոշ են։ Նոյն իսկ Սեդրակը, որ Մուշեղի հակապատկերը պիտի կազմէր իբրև գաղափարի մարդ, իբրև մարմնչող, բաւական միամիտ, բաւական երեխուն ու դիւրաթեք մի բնաւորութիւն է։ Պ. Շանթը իր ամբողջ ուշադրութիւնը եսամոլ մարդուն է նուիրել։ Եւ չենք կարող ասել, թէ նրա այդ ուշադրութիւնից շատ օգտվել է Տէրեանը իբրև տիպ։ Միայն պիեսի վերջում այդ մարդու եսամոլութիւնը երևան է գալիս տպաւորիչ փաստերով և այդտեղ նա արտայայտում է տիպի մի քանի ուժեղ գծեր։ Դա տիպի ամբողջութիւն չէ, այլ բեկորներ միայն։ Այն, ինչ ասվում է բնաւորութեան լուսաբանութիւն, չը կայ։ Ընթերցողը առաջին գործողութիւնների մէջ հաղիւ կարողանում է նշմարել Տէրեանին, այնքան նա հասարակ ու սովորական մարդ է։ Միայն վերջերում, գործող անձերից մէկը առանձնապէս շեշտվում է նրանով, որ յայտարարվում է ծայրայեղ անձնամոլութեան հերոս։

Ամենից շատ զարմանալի է պ. Շանթի վերաբերմունքը դէպի իր հերոսը։ Տէրեանը բենեգատ է, դաւաճան է, անձնամոլ է այն աստիճան, որ կարող է իր անձի համար ամեն ինչ անել։ Այս բոլորը շատ հնարաւոր է, շատ բնական։ Ամենակատաղի աւազակն անգամ կարող է իր անձը արդարացնելու, ինքն իր աչքում. օրինաւոր պատճառներ գտնել։ Տէրեանը որքան ուզում է կարող է խօսել իր մասին,—մենք նրան կը լսենք, գուցէ նոյն իսկ կը համաձայնվենք, որ նա, ճիշդ, որ հիասթափված մարդ է, որ նա ակամայ, հանգամանքների ստիպմամբ է ընկել այն ճանապարհի վրա, ուր ինքնապաշտութիւնն է միայն հասկացվում։ Բայց կան որոշ, շօշափելի գործեր և իրեր, որոնց վերաբերմամբ այլ ևս արդարացումները չեն հետաքրքրական, այլ այն գնահատութիւնը, որ նրանք ստանում են հասարակութեան մէջ։ Ահա այստեղ պ. Շանթը իսկ որ զարմանալի է։

Նա պատմում է այսպիսի մի բան։ Տէրեանի մատնութեամբ բանտարկվում է Սեդրակը, որ նրա վաղեմի ընկերն էր։ Իրողութիւնը դրված է հրապարակում։ Սեդրակի քոյրը, Աղնիւը, խմանալով հանդերձ, որ մատնողը Տէրեանն է, վազում է նրա մօտ՝ խնդրելու որ մի բան անէ իր եղբօրը ազատելու համար։ Թոյլ տանք, որ կան այդպիսի միամիտ քոյրեր։ Աղնիւը լսում է, Տէրեանից հաստատ խօսք որ այո, դա իր ձեռքի գործն է. բայց և այդպէս, ոչ մի զզուանք, ոչ մի բողոք չէ դուրս գալիս այդ քրոջ բերանից։ Տէրեանի արածը մի անուշ բան է, և կարելի է դեռ հանգիստ ու անվրդով նրա հետ վիճաբանութիւն ունենալ։ Եւ Տէրեանը կարող է դեռ յոխորտալ իր զզուելի քաջագործութեամբ, իսկ մի խեղճ աղջիկ, որ կանգնած է եղբօրը կորցնելու վտանգի առաջ, ոչինչ չունի ասելու այդ ստոր մարդուն, բացի միայն նրանից, որ ինքը մի ժամանակ սիրելիս է եղել նրան, նոյն այդ Տէրեանին։ Տեղի է ունենում աւելի ևս զզուելի մի տեսարան։ Տէրեանը լրբաբար առաջարկում է Աղնիւին վերանորոգել իր սէրը, միանալ իր հետ, իր կինը դառնալ, ձեռք վերցնելով բանտարկված եղբօրից, թքելով հասարակական կարծիքի, նախապաշարմունքների վրա։ Եւ այդ եղբայրասէր քոյրը, զգացմունքով ու սրտով կոյս այդ աղջիկը չէ վրդովվում, չէ բորբոքվում այդ գազանային առաջարկութեան դէմ։ Նա լուռ է, ուշադիր ունկնդիր մի հրէշ ընկերասպանի առաջ։ Նոյնպէս լուռ ու անշարժ է մնում, երբ գարշելին նրա երեսին շպրտում է միքանի անարգանքներ էլ և հեռանում է։

Սա արդէն անարդարութիւն է աղնիւ զգացմունքով ապրողների համար, զրպարտութիւն է մի քրոջ համար։ Եւ շնորհիւ այսպիսի անարդար ու անհեթեթ վերաբերմունքի պ. Շանթի հերոսը այնքան բացասական տիպի նմա-

Նախագծված ծրագրի համաձայն՝ Ուլուխանլու-Ջուլֆայի գծի շինութիւնը պէտք է վերջանար 1905 թուի յունվարի 1-ին։ Բայց որովհետև Հեռաւոր-Արևելքի պատերազմի պատճառով՝ ներկայ տարվայ ելևմուտքի մէջ որոշ կրճատումներ մտցրին խնայողութեան նպատակով, և որովհետև կրճատման ենթարկված յօդուածներից մէկն էլ այդ գծին էր վերաբերում, դրա համար այժմ այլ ևս յոյս չը կայ, որ գծի շինութիւնը վերջանայ 1906 թուի յունվարի 1-ից աւելի վաղ։ Ինչպէս արդէն մի անգամ մենք յիշել էինք, այդ գծի բիւդջէից կրճատված է այս ընթացիկ տարվայ համար 2 միլիոն ռուբլի։

—

Մայրաքաղաքի լրագիրները լսել են, որ ներկայ տարվայ աշնանը Պետերբուրգում կազմակերպվելու է մի յատուկ յանձնաժողով, որին մասնակցելու են պետական բոլոր հաստատութիւններից ներկայացուցիչներ. այդ յանձնաժողովը մշակելու է ծրագիր, թէ ինչպէս կարելի է բոլոր պետական գործողութիւնների մէջ, նոյն իսկ զինուորական և ծովային վարչութիւններում՝ նախնական իրական վերահսկողութիւն մտցնել։

—

Կովկասի դպրոցական շրջանում միջնակարգ կրթութիւն ստացած՝ Պետերբուրգի բժշկական ինստիտուտի և բարձրագոյն կուրսերի ունկնդիր կանանց օժանդակութեան ընկերութիւնը խնդրում է քաղաքային վարչութեանը մտցնել իր հետևեալ տարվայ նախահաշվի մէջ 1000 ռուբլի օժանդակութիւն այդ ընկերութեան համար։

—

Լեհական լրագիրների ասելով, Վարշավայի բանկերում բողոքի են ենթարկվել ներքին նահանգներից 2 միլիոն ռուբլու մուրհակներ, գործերի ընդհանուր դանդաղութեան պատճառով։ Ենթադրվում է, որ նիւթական այդ կրիզիսի պատճառներից մէկն էլ ներկայ պատերազմն է։

—

Մենք ստացանք Վարնա քաղաքից հայերէն մի նոր գիրք տպված այդ քաղաքի հայ տպարանում այս տարի։ Դա—Մուհամմէդի կենսագրութիւնն է, որ կազմել է մեր գրական աշխարհին լաւ ծանօթ Աբրահամ Ամիրխանեանցը, որ քաջ ծանօթ է արաբական, պարսկական և թիւրքական լեզուներին ու մանաւանդ իսլամական կրօնական գրքերին։ Առաջին անգամն է, որ հայ գրականութեան մէջ փորձ է լինում տալ արաբ հռչակաւոր մարգարէի լիակատար կենսագրութիւնը, կազմված եւրոպական և արաբական աղբիւրների հիման վրա ու քննադատական եղանակով։ Կաշխատենք առանձին խօսել այդ գրքի մասին։

—

Այն երիտասարդները, որոնք ծնվել են հոկտեմբերի 1-ին 1883 թուից մինչև հոկտեմբերի 1-ը 1884 թիւ և ենթարկվում են 1905 թուին զինուորագրութեան, պարտաւոր են այժմեանից գնալ զինուորագրութեան ատեանները և գրվելով այնտեղ, ստանալ ստացականներ։

—

Ամսիս 22-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան դատարանական բաժինը վճռեց 40 տանտէրերից պահանջներ անել այն ծախսերի համար, որ քաղաքային վարչութիւնը նրանց փոխարէն կատարել է սանիտարական կարգադրութիւնները չը կատարելու պատճառով։ Պահանջը 200 ռուբլուց աւելի է։

—

Այսօր, ամսիս 24-ին, նահանգական սանիտարական գործադիր յանձնաժողովի նիստն է նշանակված սուբ վարակիչ հիւանդութիւնների դէմ միջոցներ ձեռք առնելու համար։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ջրաբուժական յանձնաժողովի նախագահ ընտրված է բժիշկ Լունկեվիչ։

—

Թիֆլիսի քաղաքային գիշերօթիկ առաջին ապաստարանում ընդունելութիւնը դադարեցրված է կարկատաններ կատարվելու պատճառով։ Ընդունելութիւնը կը լինի երկրորդ ապաստարանում։

—

Սիբիրական երկաթուղու հաւաքած վիճակագրական տեղեկութիւնների համեմատ, որոնք տպված են „Вѣст. Сиб. Ж. Д.“ լրագրում, փոխադրված կալանաւորների և նրանց ուղեկցող պահապանների ընդհանուր թիւը իւրաքանչիւր տարի աճում է. 1903 թուին փոխադրված է, 100,000 մարդ։

—

ՍՏԱՒՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Այս տարի Ստաւրոպոլի գիմնազիաների դասընթացն աւարտեցին քսան հոգի հայ երիտասարդներ և օրիորդներ։ Արական գիմնազիայի կլասիքական բաժինը աւարտեցին՝ 1) Բալէեան Խաչատուր, 2) Զարիֆեան Էմմանուէլ, 3) Լոդոչնիկեան Սարգիս, 4) Մազլումեան Միքայէլ, 5) Չերնօվ Սարգիս, 6) Տրապիզոնցեան Միքայէլ, 7) Քեչեճեան Արամ (բոլոր եօթն էլ Նոր-Նախիջևանից) և 8) Սողոմոնեան Խաչեղբայր (Նոր-Նախիջևանի Թոփտի գիւղից)։ Վերջինս՝ նախ քան գիմնազիայի VI դասատուն մտնելը՝ աւարտել է Նոր-Նախիջևանի հայոց թեմական դպրոցը և հիմա մտադիր է համալսարանի լեզուաբանական բաժինը մտնելու. սովորում էր Նոր-Նախիջևանի հոգաբարձութեան նիւթական օժանդակութեամբ և ապագայում էլ արժանի է նպաստի, որովհետև հասարակութեան օգտաւէտ անդամ լինելու մեծ յոյսեր է տալիս։ Նոյն գիմնազիայի բէալական բաժնի VII լրացուցիչ դասարանը աւարտեցին—1) Անանեան Դաւիթ (Նոր-Նախիջևանցի), 2) Ճգնաւորեան Թովմաս (բագուցի) և 3) Մսիրեան։ VI դասարանը աւարտեցին—1) Բաղուրեան Նիկողայոս (Թիֆլիսեցի), 2) Ղալաճեան Մկրտիչ և 3) Սեֆերեան (արմաւիրցի)։—Օրիորդաց Օլգինեան գիմնազիան աւարտեցին—1) օր.օր. Ախքելմանեան (նախիջևանցի), 2) Թամբիեան Վ. (արմաւիրցի), 3) Թիքիճեան Շուշան (ստաւրոպոլցի) և 4) Պոպովեան Հեղինէ (ստաւրոպոլցի)։ Սրանցից օրիորդ Ախքելմանեան աւարտեց ոսկէ մեդալով։ Իսկ Ալէքսանդրեան գիմնազիան աւարտեցին—օր.օր. 1) Յովհաննիսեան Վառվառէ և 2) Քիրիշչեան Եւգինէ (Նոր-Նախիջևանցի)։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Մէկ մէկու հանդէպ։ Եւրոպական պատերազմական քննադատների կարծիքով, անձրևների մօտեցող շրջանը կը ստիպէ եապոնացիներին տալ շուտով ընդհանուր ճակատամարտ գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի բանակին։ Այդ պատճառով հետաքրքրական է իմանալ, թէ ներկայումս որքան յոյժեր ունեն երկու պատերազմող կողմերը, կանգնած միմեանց հանդէպ։

«Figaro» լրագրի քննադատի կարծիքով, ռուսաց գլխաւոր հրամանատարը ունի Մանջուրիայում մինչև 124 բատալիոն հետևակ զօրք, 346 թնդանօթ (որոնցից 192-ը նոր տիպի, 76 հազարամէտր) և 99 էսկադրոն ու հարիւրեակ, այսինքն մօտ 145,000 կուռողներ։ Այդ յոյժերը տարածված են Մուկդէնից մինչև Գայպին և ծանրութեան կենտրոնը հանդիսանում է Լեաօեանը։

Արդ, այդ յոյժերի առաջ ի՞նչ յոյժեր կարող են հակադրել եապոնացիները։

«Եապոնացիները կարող են դաշտը դուրս հանել ոչ աւելի քան 13 դիվիզիա։ Նրանցից մինը, 7-րդը, որի կազմակերպութիւնը դեռ չէր վերջացել, երբ սկսվեց պատերազմը, մնացել է Եապոնիայում։ Մնացածները հանվել են ցամաքի վրա։ Նրանցից հինգը (1, 3, 4, 5 և 11 դիվիզիաները) կազմում են երկրորդ բանակը, որ գտնվում է Լեաօդունեան թերակղզում գեներալ Օկուի հրամանատարութեան ներքոյ։ Այդ բանակը, հեծելազօրքի բրիգադի և դաշտային արտիլէրիայի բրիգադի հետ միասին ունի 60 բատալիոն, 268 թնդանօթ և 233 էսկադրոն, այսինքն 80,000 կուռողներ։ Նրա պաշտօնն է—վերցնել Պօրտ-Արտուրը. նրանից մի մաս բաժանել էին գեներալ Շտակելբերգի սիւնը յետ մղելու համար։ Հէնց դա է, որ նորերս կռիւ մղեց Վաֆանգօուի մօտ, իսկ այժմ արշաւում է Գայպինի վրա։

Մնացած 7 դիվիզիաները (գվարդիական, 2, 6, 8, 9, 10 և 12-րդ) կազմում են հեծելազօրքի բրիգադի և դաշտային արտիլէրիայի բրիգադի հետ միասին առաջին և երրորդ բանակները (Կուրօկիի և Նոդզուի) որոնք ուղղված են Կուրոպատկինի բանակի դէմ։ Նրանք տարածված են Սայմաձիից մինչև Սիւեան։ Նրանց ընդհանուր յոյժը—84 բատալիոն, 360 թնդանօթ և 35 էսկադրոն, ընդամենը 115,000 կուռողներ։ Ընդունելով, ընդհանրապէս, որ եապոնական գլխաւոր շտաբը արշաւանքի կուղարկէ և այն զօրքերը, որոնք մասնակցել են Վաֆանգօուի կռիւին, իսկ Պօրտ-Արտուրի մօտ կը թողնէ միայն երեք դիվիզիա, այն ժամանակ եապոնական բանակի թիւը ամենաշատը կը լինի 150,000 կուռողներ։ Եւ ուրեմն, արդէն ներկայումս Լեաօեանի մօտ Կուրոպատկինի և եապոնացիների յոյժերը հաւասարակշիռ են։ Ցամենայն դէպս, պէտք է այս կէտը լաւ ըմբռնել, որ եապոնացիները արդէն գործի են դրել իրանց ունեցած բոլոր յոյժերը, իսկ ռուսները դեռ անսպառ յոյժեր ունեն (Новости)։

Նոր լուրեր միջնորդութեան մասին։ «Եապոնիան չէ որոնում միջնորդութիւն, չէ ցանկանում, պէտք չունի միջնորդութեան»—ահա ինչ ասաց բարոն Սուէմատսուն։ Եւ սակայն, լուրերը այն մասին, թէ Եապոնիան փորձեր է անում միջնորդութիւն կապել, շարունակ տարածվում են և, այս անգամ այդ լուրերը դուրս են գալիս Վիէննայի դիպլոմատիական շրջաններից։ Այդ շրջաններում հաստատում են, որ Եապոնիան ցանկանում է վերջ դնել պատերազմին և արդէն շօշափել է այդ մասին մի քանի եւրոպական պետութիւնների կարծիքը։ Եապոնիան, ասում են գերմանական լրագիրները, պատրաստ է ընդունել Ռուսաստանի տիրապետութիւնը Պօրտ-Արտուրի վրա և նրա առևտրական տիրապետութիւնը Մանջուրիայում և հրաժարվել հողային նուաճումներից, բայց կամենում է ազատ գործել Կորէայում։ Դժուար թէ այս լուրը հիմն ունենայ։ (Новости)։

Ռուս-եապոնական պատերազմի երկարատեւութիւնը։ Վիէննայի «Neue Freie Presse» թերթը ներկայ պատերազմի առիթով ասում է, որ նրա ելքի մասին չէ կարելի որ և է որոշ գաղափար կազմել։ «Արդէն անցել է հինգ ամիս պատերազմի սկզբից. ցամաքի վրա եղան արիւնահեղ ճակատամարտներ—Եալուի, Ցինչժօուի, Վաֆանգօուի մօտ. ծովի վրա եղան մի քանի ազէտներ։ Սակայն մենք այսօր նոյնքան հեռու ենք ելքից, որքան պատերազմի առաջին օրը։ Այս պատերազմում նշանաւոր է հէնց այն բանը, որ որքան աւելի են մօտենում թշնամիները իրար, այնքան հեռաւոր է թւում նրա վախճանը։ Վիճում են այն մասին, թէ երբ դրոհ կը տան Պօրտ-Արտուրի վրա, բայց ոչ օրի յայտնի չէ, արդեօք գոնէ մի քայլ մօտեցել են բերդը պաշարող եապոնացիները։ Կուռողների արիւնը թափվում է իբրև վտակ, ամենքը հիանում են զօրքերի հերոսութեամբ, բայց պատերազմի վերջը առաջվայ պէս հեռու է։ Արդեօք այս պատերազմը նրա համար է դարձել արիւնահեղ դէպքերի մի շարք, որովհետև ռուսները ստիպված են աջակցութիւն ստանալ այնպիսի տեղերից, որոնք պատերազմի բեմից շատ հեռու են. կամ գուցէ եապոնական գեներալները դիտմամբ դանդաղացնում են իրանց նախկին թափով շարժումը, վախենալով վճռական փորձանքի ենթարկել իրանց պլանը, ինչ և լինի, բայց պատերազմի շուտ վերջաւորութեան հաւատը, եթէ միայն մէկը ունի այդպիսի հաւատ, աւելի և աւելի կասկածելի է դառնում, չը նայելով Ցինչժօուի և Վաֆանգօուի ճակատամարտերին, չը նայելով եապոնական արագ աջողութիւններին և բաղդաւորութիւններին։ Շնչասպառ ուշադրութեամբ ունկն են դնում լուրերին նաւերի կորստեան, վերցրված ամրութիւնների մասին, ապա յանկարծ տիրում է լռութիւն, դադար և

տակի, մի տեսակ «գերմարդի»։

«Բանբերի» մէջ նոր հիւր է և ծանօթ թիւրքահայ գրող պ. Երուանդ Օտեան, որ հանդէս է եկել «Համբարձում-աղա» անունով մի սիրուն գրված պատմուածքով, որ մի և նոյն ժամանակ ապացոյց է և այն բանի, որ թիւրքահայ վիպագրութիւնը սկսում է հասկանալ իր ճշմարիտ կոչումը և գեղեցիկ ապագայ ունի, եթէ, ի հարկէ, ապրելու և զարգանալու հնարաւորութիւն տրվի։ Համբարձում-աղան մի լաւ գծագրված, խնամքով մշակված տիպ է. իսկապէս անընդունակ, ողորմելի մի մարդուկ, որ, սակայն, խելօքութեան և լրջութեան հիմնաւոր հռչակ ունի իր ծանօթների շրջանում շնորհիւ իր արտաքինի, իր շարժուածքների, մանաւանդ սակաւախօսութեան։ Այդ սիրտ ճնշող գծիութեան մօտ լաւ լուսաբանվում է նրա հակապատկերը կազմող Սարգիս-աղան, մի կենսուրախ, սրտաբաց, զուարթ մարդ։ Բայց պատմուածքի վերջը բաւական թոյլ և արհեստական է։

Աւելի անհամ ու ձգձգված է պ. Առանձարի «Տասը տարի ետք» պատմուածքը։ Հեղինակը, երգիծաբանի անհիմն պրէտէնզիաներից բռնված, շահագործում է այն ասէկոսէները, պառաւական զրոյցները, որոնք պտտում են Թիֆլիսի հայոց մամուլի շուրջը, մի նիւթ, որ համահաւասար անաջողութեամբ և տափակութեամբ շահագործել են և ուրիշ գրողներ։ Բերենք մի կտոր։

Այդ օրեր խօսակցութեան մը մէջ խմացայ, որ Կովկասի էն տարածված օրաթերթը նոյնպէս սկսած էր վարձատրել իր աշխատակիցները. անմիջապէս նամակ մը գրեցի Թիֆլիսի ընկերոջս, որ իմ կողմէն յիշեալ օրաթերթի խմբագրութեան դիմէ և աշխատակցութիւնս առաջարկէ որոշ վարձատրութեան մը փոխարէն։

...Ցոյսս բոլորովին ի դերև ելաւ. ընկերս կը գրէր թէ օրաթերթին խմբագրութիւնը չէր ընդունած առաջարկս, մօտ 3000 վճարող բաժանորդ ունենալով հանդերձ՝ դարձեալ նիւթական անձկութեան պատրուակը առաջ քշելով. «Որովհետև, կը մեկնէր իր կողմէն սրամիտ բացատրութեամբ մը, այդ խմբագրութեան ժառանգական անդամները որոշած են թերթին տարեկան ամբողջ հասոյթը մէջերնին բաժնել և եթէ բան մը աւելնայ, աշխատակիցներու վարձատրութեան յատկացնել. սակայն այս հաշուով մինչև հիմա դեռ բան մը չէ աւելցած»։

Այսպիսի ապուշ ասէկոսէներ, ստոր տեսակի գեղարուեստական բամբասանքներ Թիֆլիսի փողոցներում, այո, կարելի է լսել։ Բայց որ պ. Ադոնց դրանց դրել է իր «ազգային բարձր գրականութեան» մէջ,—այդ է իսկապէս զարմանալին։ Մի՞թէ բարձրութիւնը այդպէս է չափվում, պ. Ադոնց։ Դուք, ի հարկէ, գիտէք թէ ինչ ակնարկներ կան այս հատուածի մէջ և տպել էք, անշուշտ, համոզված լինելով որ այդ «ազգային բարձր գրականութեան» մէջ կայ ճշմարտութիւն։ Բայց ի՞նչ կասէիք, եթէ ձեզնից ազնուաբար պահանջէին ապացուցանել այդ ճշմարտութիւնը։

Ռուսահայ գրողներից «Բանբերի» երկրորդ համարում երևան են եկել պ.պ. Ահարոնեան և Փափազեան։ Ահարոնեանի «Մահը» կրում է իր վրա այդ վիպագրողի տաղանդի բնորոշ յատկութիւնները. մռայլ, յուսահատական գոյների անչափ խտացում, կեանքի սրտաճաք տեսարաններ, վշտի, դժբախտութեան հիւթալից, յուզիչ երգ։ Լալկանութիւնը Ահարոնեանի գրական ընաւորութիւնն է. և այդ կողմից նրան ոչ ոք չէ կարող հաւասարվել մեր ներկայ գրականութեան մէջ։ Խաչատուր Աբովեանի հոգին է իջել նրա վրա։ «Մահը» տխուր ու ծանր է իբրև մահ։ Բայց նրա վերջը, հասկանալի պատճառներով, բաւականաչափ պարզ չէ և թուլացնում է տպաւորութիւնը։

Հետաքրքրական նիւթ է շօշափում պ. Փափազեանի «Արդար թէ Մեղաւոր» պատմուածքը։ Սօցիալական անարդարութիւնների յաւիտեան թարմ, յաւիտեան տանջող նիւթերից մէկն է դա։ Պ. Փափազեանց լաւ կարողանում է տեսարաններ ու դրութիւններ պատմել։ Դրանք թոյլիկ, շտապ գծագրված պատկերներ են։ Պ. Փափազեանց պատմող է, բայց ոչ նկարագրող, վերլուծող, Ահարոնեանը բանաստեղծ է, Փափազեանը պատկերագծող։

«Բանբերի» ոտանաւորների մասին մենք չենք խօսի։ Այդտեղ կայ զեկադենտութիւն կամ, ըստ պ. Ադոնցի, «բարձր գրականութիւն», կայ և սովորական արուեստ, այսինքն պարզն ու հասկանալին, որի համար, հետևելով նոյն չափին, պէտք է արդէն «ստոր» կամ ուրիշ անուն գտնել։—Նշանակելի հանգամանք է, որ ռուսահայ բանաստեղծները հանդէս են գալիս գլխաւորապէս իբրև հին արուեստի ներկայացուցիչներ, մինչդեռ թիւրքահայ բանաստեղծները ոտով-գլխով դեկադենտներ են։ Եռևոյթը ունի իր խոր պատճառները, որոնց բացատրելու տեղը չէ այստեղ։

Չը մոռանամ յիշել, որ «Բանբերի» այս համարում շարունակվում է, բայց, ըստ երևոյթին, չէ վերջանում, «Արևմտեան հայոց արդի գրականութիւնը» վերնագրով ընդարձակ ուսումնասիրութիւնը, որ թիւրքահայոց գրականութեան պատմութեան առաջին փորձն է և հէնց այդ պատճառով էլ ներկայացնում է մեծ հետաքրքրութիւն։ Ճիշտ է, այդտեղ աւելի պարբերական մամուլի պատմութիւնն է խօսում, բայց մենք չը պիտի մոռանանք, որ մանաւանդ թիւրքահայերի գրականութիւնը համարեա ամբողջովին ամփոփված է պարբերական մամուլի մէջ։ Հեղինակը ի նկատի ունի գլխաւորապէս վիպագրութիւնը, բանաստեղծութիւնը, պատմագրութիւնը, հրապարակախօսութիւնը։ Բայց թիւրքահայերը իրանց գրականութեան մէջ ունեն և ուրիշ այնպիսի ճիւղեր, որոնք նրանց գերազանցութիւնն ու առաջադիմութիւնն են ցոյց տալիս ռուսահայերի հետ համեմատած։ Մեր խօսքը հասկանալի կը լինի, եթէ նկատի առնենք Վենետիկի և Վիէննայի Մխիթարեանների գործունէութիւնը, որոնք համարեա ամբողջովին թիւրքահայեր էին և են։

Գնահատելին այդ գրական տեսութեան մէջ հեղինակի լուրջ, համակրելի հայեացքներն են։

(Կը շարունակվի)

մենք լսում ենք արագացրած անցումների, թեային շարժումների մասին։ Ֆրանսիական պատերազմն ևս երկարատև էր, բայց արդէն երեք ամսից յետոյ կարելի էր գուշակել նրա ելքը։ Ներկայ պատերազմը, սակայն, ինչ որ ելքը։ Ներկայ պատերազմը, սակայն, ինչ որ մայր—հանելուկային է. նա լի է անակնկալութիւններով. նա ունեցել է և դեռ կունենայ շատ արիւնահեղ տեսարաններ, բայց վճռական ակտի մասին դեռ չէ կարելի մտածել։ (Н. Вр.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդօնից հեռագրում են „Бирж. Вѣд." լրագրին, որ յունիսի 16/29-ին այդտեղ կայացաւ Զօնս Բրայսի նախագահութեամբ, միջազգային կօնֆերենցիայի նիստը արևելեան հարցի մասին։ Կօնֆերենցիային մասնակցում էին Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան։ Պատուիրակները հանդիսանում էին յիշեալ երկիրների պարլամենտական գործիչները։ Ֆրանսիական պարլամենտի անդամ, յայտնի հրապարակախօս Պրէանսէն ներկայացրեց քուէարկութեան՝ որոշման հետևեալ բանաձևը։

«Խորին հաճոյքի զգացումով կօֆերենցիան հաստատում է, որ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև կատարեալ միութիւն կայ, որ այնքան կարևոր է, ի նկատի ունենալով Թիւրքիայի ցաւալի վերաբերմունքը այն պարտաւորութիւններին, որ դրված են նրա վրա Բերլինի դաշնագրի 23 և 61 յօդուածներով, որոնք ապահովացնում են բէֆօրմները եւրոպական և ասիական վիլայէթների համար։ Կօնֆերենցիան յոյս ունի, որ Լօնդօնի, Պարիզի և Հռոմի կաբինէտները, առանց ժամանակ կորցնելու, կանեն ինչ որ կախված է իրանցից, որպէս զի ամենաշուտ կերպով մըցանեն բէֆօրմները Օսմանեան կայսրութեան մէջ»։ Այդպիսի ոգով, բայց աւելի խիստ ոճերով կազմված են ուրիշ բանաձևներ, որ ներկայացրին Հերեֆօրդի եպիսկոպոսը, Դ'Էտուրնէլ-դը-Կոնստան և կօնֆերենցիայի ուրիշ անդամները։ Բնաւորոշէ Սերբիայի, Բուլգարիայի և Մօնտենեգրոյի պատուիրակների բացակայութիւնը կօնֆերենցիայում։

Վերջին հեռագիրներին նայելով, գործերը Բիթլիսի վիլայէթում հետզհետէ աւելի նպաստաւոր դարձուածք են ընդունում։ Հաւանօրէն, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դիպլոմատիական ներկայացուցիչների միջամտութիւնից յետոյ, սուլթանից հաստատված կարգադրութիւնների իրագործումը, սկսում է աւելի եռանդով առաջ գնալ։ Այդ կարգադրութիւնները կայանում են նրանում առաջին, որ բնակիչներին ներում է շնորհված, բացի պարագլուխներից. երկրորդ, տրվելու է 5000 ֆունտ բանդված բնակարանների վերաշինութեան կամ նորոգութեան համար. երրորդ, թոյլատրված է փախստական հայերին վերադառնալ գիւղերը. չորրորդ, ուստեստ բաժանել կարօտեալներին։ Ուրեմն, ամեն բան, կարծէք թէ կարգին է։ Հայերին թոյլատրում են վերադառնալ աւերված տները, որտեղից նրանք փախել են, երևի թիւրիմացութեամբ, որովհետև Բ. Դուռը, ինչպէս հաղորդում է «Königsb. Zeitung» լրագիրը, դեռ հերքում է թէ, իրապէս, որ և է նշանաւոր բռնութիւններ կատարված լինեն։ Դեսպանները, ինչպէս ասված է հաղորդագրութեան մէջ, չը կամեցան վիճել այդ առիթով Բ. Դրան հետ, մինչև որ չը ստացվեն հիւպատոսներից մանրամասն զեկուցումներ։ Գործի մանրաղնին քննութիւնը պէտք է երկար տևի և դժուար կարելի կը լինի բացարձակ ճիշդ հետևանքների հասնել, որովհետև քաղաքների բնակիչները չափազանցնում են դէպքերը, իսկ գիւղացիները, Թիւրքերի վրէժխնդրութիւնից վախենալով, շատ էլ հակված չեն տալ ճշմարիտ ցուցմունքներ. միւս կողմից կոտրածի մէջ մեղադրվող քաղաքացիական և զինուորական իշխանութիւնները, ինչպէս և քիւրդ պարագլուխները, եռանդով աշխատում են թագցնել բոլոր հետքերը։ Լուրջ միջոցներ մեծ պետութիւնների կողմից ձեռնարկվելու յոյս չը կայ, բայց նրանք ամեն կերպ պէտք է ջանան նոր բռնութիւնների առաջն առնել։ (Нов.)

—Մենք հաղորդել էինք, որ Մուշի եւրոպական փոխ-հիւպատոսները զեկուցել են Կ. Պոլսի իրանց դեսպանութիւններին, որ իրանց ներկայութիւնը՝ գաղանութիւնը դադարեցնելու համար անօգուտ է, բայց որովհետև թիւրքերը հերքում են գաղանութիւններ կատարած լինելը, ուստի դեսպանները պահանջել են հիւպատոսներից մանրամասն զեկուցագրեր։ Բրիտանական փոխ-հիւպատոս կապիտան Տայրէլը շուտով պէտք է ճանապարհորդէ երկրում խնդիրը քննելու համար։ Կ. Պոլսում հաւատացած են, որ ոչ Անգլիան, ոչ Ֆրանսիան, ոչ մի ուրիշ պետութիւն թիւրքաց կառավարութեան դիպլոմատիական առաջադրութիւններ չի անի հայոց հարցի մասին, առանց կանխաւ վճռելու թէ մինչ որ աստիճան մտադիր է նա աջակցութիւն ցոյց տալ հայերին, որովհետև եւրոպական դիպլոմատների անաջող փորձերը՝ բէֆօրմներ մտցնելու մասին ինքնավստահութիւն են ներշնչում թիւրքերին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 յունիսի

ՄՕՍԿՎԱ։ Յունիսի 21-ին Նովո-Դէվիչիի հանգստարանում օրհնվեց հրապարակախօս Գիլեարով-Պլատոնովի գերեզմանի վրա դրված յուշարձանը, որ կառուցվել է Կ. Օբուխովսկոյի և Իշխան Շախովսկու միջոցներով։

ԲԵԼԳՐԱԴ։ Մինիստրների խորհուրդը որոշեց, որ թագադրութիւնը կը լինի սեպտեմբերի 9-ին Ժիչի վանքում։ Բելգրադում սեպտեմբերի 11—13-ին կը կայանան մի շարք տօնախմբութիւններ։

ՊԱՐԻԶ։ Պարլամենտը ընդունեց զինուորական ծառայութեան օրէնքի փոփոխեալ յօդուածները և որոշեց, որ օրէնքը պէտք է զօրութիւն սանայ 1905 թ. յունվարի 1-ին։

ՏԵԱՆՑԻՆ։ («Բէյտէրի գործ.»)։ Յունիսի 14-ից եապօնական գլխաւոր էսկադրան զօրքեր է ափ իջեցնում Դալնի՝ Պօրտ-Արտուրի վրա վերջնականապէս գրոհ տալու նպատակով։ Գործողութիւնները ցամաքի վրա Պօրտ-Արտուրի կողմից վերջնական հետևանքի կը հասցնեն մօտ օրերում։

ՍԷՆ-ԼՈՒԻ («Բէյտէր»)։ Դէմօկրատիական կօնվենտի պատգամաւորութիւնը, 57 ձայներով ընդդէմ 5-ի, որոշեց աջակցել Պարկէրի ընտրութեան Միացեալ-Նահանգների նախագահի պաշտօնին։

ՊՕՐՏ-Օ-ՊՐԻՆՍ։ Գերմանական և ֆրանսիական դեսպանների դէմ վիրաւորական կոպտութիւն ցոյց տուած զինուորները սաստիկ պատժի ենթարկվեցին։ Միջադէպը հարթված է։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դրան պնդումով, օսմանեան բանկը համաձայնեց փոխ տալ 50,000 ֆունտ, որով պէտք է վճարվեն Մակեդոնիայում գրտնվող և ի պահեստ արձակված զինուորների ռոճիկները։

ՏՕԿԻՕ («Բէյտէր»)։ Կուրօկին զեկուցանում է, որ արևածագին երկու ռուսաց բատալիօններ թանձր մշուշի ժամանակ յարձակվեցին եապօնական առաջապահ կայանների վրա, Մօնտիենլինեան լեռանցքում։ Յետ մղվելով, նրանք նորից երևացին և երեք անգամ յարձակումն գործեցին, մինչև որ վերջնականապէս յետ մղվեցին։ Նրանք թողեցին 30 սպանված և 50 վիրաւոր. եապօնացիները ունեցան սպանված՝ 15 հոգի և վիրաւոր՝ 30։

ԼՕՆԴՕՆ։ «Բէյտէրի գործակալութեան թղթակիցը Լեաօեանում վկայում է ռուսաց զօրքերի հիանալի վիճակի մասին։ Զը նայելով սարսափելի չարչարանքներին, որ կրում են զօրքերը, նրանց ոգու տրամադրութիւնը հիանալի է։ Զինուորները ստիպված են յաճախ 12 ժամվայ ընթացքում մնալ դաշտում, մինչև հնարաւորութիւն են ստանում եփել ապուր, որովհետև անընդհատ անձրևները թացացնում են թողնված բոլոր փայտերը. չը նայելով դրան, նրանք ոչ քաջութիւնն են կորցնում, ոչ համբերութիւնը։

23 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին յունիսի 21-ին. I) «Առ 20-ն յունիսի Լեաօեանից դէպի արևելք գտընվող առաջապահ զօրքը գրաւել էր դիրք Եանդէլին լեռանցքի վրա և նոյն օրը երեկոյեան խուզարկութիւնը ցոյց տուեց, որ հակառակորդի առաջապահ զօրաբաժինը, մինչև 1500 մարդ զօրքով, գրաւում է տեղեր մեր զօրքի դիմաց Ուկավուն և Զակումէնգա գիւղերի մօտ, իսկ նրա գլխաւոր ոյժերը մնացին եռևում Ֆինշուլինի և Մօղուլինի լեռանցքներում։ Հէնց այդ ժամանակ յայտնվեց եապոնական մի բատալիօն զօրքի շարժում. նրա պատակ ունենալով անցնել Եանդէլինեան լեռնանցքի վրա գտնվող ձախ թևի ետևը Լեանդէանսեանի ուղղութեամբ։ Դրան արգելք լինելու համար ուղարկվեց այդ ուղղութեամբ մեր կողմից զօրք՝ 5 վաշտ և հեծեալ կամաւորների 2 կօմանդա և 50 կօզակ։ Եանդէլինեան դիրքի առաջ գտնվող թշնամու ոյժը պարզելու համար զօրաբաժնի հրամանատարը հրամայեց խիստ խուզարկութիւն կատարել յունիսի լոյս 21-ի գիշերը դէպի Տխանուան, Զինդեապուզա, Լինեապուզա և Սեաօկալինի վրա գտնվող կառուցները, բաղկացած 10 վաշտից, գնդապետ Լէչիցկու հրամանատարութեամբ։ Ժարժումը ծածկելու և Լէչիցկու զօրքի վերադարձը ապահովելու նպատակով, երեք վաշտ, փոխ-գնդապետ Գարնիցկու հրամանատարութեամբ, պարտաւոր էին ընթանալ դէպի Մակամէնգա, Տխաուվանից 25 վերստ հարաւ և դէպի այն ճանապարհների հանգոյցը, որոնք տանում Սինկայլինի և Լախօլինի լեռանցքները։ Յունիսի 21-ին կէս գիշերից յետոյ, 1 ժամ 15 րոպէին երկու զօրասիւները շարժվեցին վերև յիշած ուղղութիւններով։ 2 ժամ 30 րոպէին սկսվեց հրացանաձգութիւնը. փոխ-գնդապետ Գարնիցկու զօրասիւնը հասաւ Սինկայլինի և Լախօլինի ճանապարհների հանգոյցին և յետ մղեց թշնամու պահակախումբը։ Մի և նոյն ժամանակ գնդապետ Լէչիցկու զօրասիւնը առանց հրացանաձգութեան յետ մղեց թշնամու առաջապահ պահակները և մօտեցաւ բարձունքների ստորոտին, ուր գտնվում էր կռատունը, Տխավուանից 6 վերստ դէպի արևելք։ Գործի շարունակութեան ընթացքի մասին զօրաբաժնի հրամանատարը զեկուցանում է, որ անցնելով Լիդեապուզան ժամը 3 և 55 րոպէին մերոնք յարձակվեցին պահակի վրա, որը, իր կողմից, կրակ բացեց բլրադագաթից, բայց յետ մղվեց։ Մեր զօրասիւնը, յարձակում գործելով առանց հրացանաձգութեան և մի և նոյն ժամանակ ենթարկվելով ճակատից և թևից հրացանաձգութեան մօտեցաւ լեռնանցքին մինչև 150 քայլ և այդտեղ հանդիպեց ուժգին փնջաձև կրակի։ Առաջապահ զօրամասերը գրոհ տուեցին սուիններով և դուրս քշեցին եապոնացիներին խրամատներից և գրաւեցին լեռնանցքը։ Աչքի առաջ ունենալով այն, որ թշնամին սկսեց յարձակում գործել ճակատից և թևից մեծ ոյժերով, զօրասիւնի հրամանատարը, ինչպէս նրան ցուցում էր արված վաղօրօք, սկսեց յետ նահանջել։ Փոխ-գնդապետ Գարնիցկու աջ զօրասիւնը առաջ շարժվեց Տխավուանից գիշերվայ 2 ժամին և դիմեց դէպի Մակումէնգա Լախօլինեան և Սինկալինեան լեռանցքների հանգոյցը։ Գարնիցկու զօրքը նոյնպէս ունեցաւ սուիններով ընդհարում եապոնական պահակի հետ, որը մասամբ կոտորվեց, իսկ մասամբ յետ մղվեց։ Գարնիցկու երեք վաշտը գրաւեց նրա մատնացոյց արած տեղը։ Լէչիցկու յետ գնալու միջոցին սկսվեց սպանիչ կրակ այն բլուրներից և լեռնանցքից որ գրաւել էին եապոնացիները. Զը նայելով դրան, զօրասիւնը յետ էր նահանջում մեծ կարգապահութեամբ, ինչպէս զօրահանդէսի ժամանակ։ Քաջ գնդապետ Լէչիցկին, որ բոլոր ժամանակը մնում էր զօրաշղթայի մէջ, զարմանալի հմտութեամբ և պաղարիւնութեամբ, առաջնորդում էր զօրասիւնին և յետ գնաց ամենից վերջը շտաբի հրամանատար Սերեբրենիկովի և ադիւտանտ պօրուչիկ Գրիգօրիեվի հետ։ Զօրասիւնի բոլոր մասերը և երեք վաշտ, որոնք կազմում էին Գարնիցկու զօրասիւնը, պահում էին իրանց միօրինակ հոյակապ հանգիստ և առանց որ և է իրարանցումի, կատարելով նրանց վրա դրված պարտաւորութիւնները։ Մեր կորուստներն են՝ թեթև վիրաւորված է գնդապետ Լէչիցկին. վիրաւորված են իմ տրամադրութեան տակ գտնվող գնդապետ Պօսպէլով, փոխ-գնդապետ Տրախիմովսկի, կապիտան Սալաեվ, պօրուչիկ Կուզին և դարձեալ մի քանի օֆիցէրներ, որոնց ցուցակը կը ներկայացնեմ լրացուցիչ զեկուցումով. իսկ զինուորների կորուստները, թէ վիրաւորված և թէ սպանված, 200 հոգուց աւելի են։ Ես իմ շտաբի հետ դիտում էի կռիւը Տխավուանի աշտարակից, ուստի կարող եմ անձամբ վկայել զօրքի վարմունքները։ Զեմ կարող լռել Բէմբէզով քահանայի խնամքների մասին, որ նա սաստիկ հրացանաձգութեան ժամանակ կապում էր վիրաւորների վէրքերը և նոյն իսկ անձամբ օգնում էր՝ դուրս հանելու կռուի դաշտից վիրաւորներին։ Բոլոր վիրաւորները կռուի դաշտից դուրս բերվեցին գնդապետ Լէչիցկու յարձակում գործելու ժամանակ և փրկվեցին։ Անհետ կորածներն են՝ պօրուչիկ Կուպրիեվ մի քանի կամաւորների հետ։ Զօրաբաժնի հրամանատարը վկայում է, որ շատ վիրաւորներ վիրակապից յետոյ հրաժարվեցին գնալ հիւանդանոց բժշկվելու համար, այլ վերադարձան զօրքի շարքերը։ 2) Յունիսի լոյս 19-ի գիշերը Գայչժուից դէպի հարաւ հակառակորդը նեղեց մեր աջթևեան պահակը, որ գտնվում էր ծովափի մօտ Գուանցզեատուն գիւղում Գայչժուից 22 վերստ հեռու դէպի հարաւ-արևմուտք։ Յունիսի 20-ի առաւօտեան մեր օժանդակ զօրքերը նորից գրաւեցին Գուանցզեատունը, այդ գործում վիրաւորվեց մեր զինուորներից մէկը։ Կէսօրից յետոյ թշնամու զօրքը, բաղկացած երկու բատալիօնից և 6 էսկադրօնից երեք գնդաձիգ թնդանօթներով սկսեց յարձակում։ Թշնամու գլխաւոր բազմութիւնը ընթանում էր երկաթուղու արևմտեան կողմով և երկու վաշտեր արևելեան կողմով. մեր պահակները, որոնք գտնվում են 80 վտակի հովտից դէպի հարաւ, թշնամու թունդ կրակի տակ, սկսեցին յետ գնալ Սեաօխէգիի մօտ, 6 վերստ դէպի արևելք Բաօսսիչժամից, առաջաւոր հեծելազօրքի գլխաւորը, որ զեկուցումն էր ստացել անցած-դարձածի մասին կէսօրվայ ժամը 2 և 30 րոպէին շարժվեց սրարշաւ մի զօրախմբով դէպի Բաօսիչժա. այդ ժամանակին մօտ հակառակորդը շարեց գնդակահարները բարձրութեան վրա, Դունշախէից դէպի հիւսիս-արևմուտք, իսկ հետևակով լցուցեց մօտակայ գիւղերի բարձունքը. մեր հեծելազօրքի գլխաւորը այդտեղ մօտ դիրքի բատարէան գնաց Բաօսիչժայի մօտ դիրքի վրա, երկաթուղու մօտ, դրպագունների և սահմանապահների պատսպարութեան ներքոյ։ Մեր արտիլերիական և զէնքային կրակի առաջ թշնամին շտապով հեռացաւ իր գրաւած գծից և սկսեց նահանջել դէպի Սենիչէն։ Մեր հեծելազօրքը հալածեց եապոնացիներին մինչև իրանց առաջաւոր դիրքը, վեց վերստ դէպի հիւսիս Սենիչէնից, որ դուրս եկաւ սաստիկ հիւսիս Սենիչէնից, որ դուրս եկաւ սաստիկ ամրացրված և շատ հաստատ գրաւված։ Մեր կորուստներն են. վիրաւորված է մի զինուոր։ Դերեզը և Տամիրլգօուն յունիսի 20-ին մաքրված են եապոնացիներից, բայց Զապանլին լեռնանցքը մնում է գրաւված նրանց զօրախմբով, ինչպէս և Մադավայէն, հիւսիսային ճանապարհի վրա Սիւխանից, Ուլդալինեան լեռնանցքի վրայով։ Եապոնական մի փոքր առաջաւոր զօրախումբ գրաւեց և հաստատվեց Լիուտիա-տատիրլեա գիւղում, 9 վերստ հեռու Սայօտանից, արևելեան ուղղութեամբ։ Ըստ երևոյթին, հակառակորդի գլխաւոր ոյժերը այժմ համախմբվում են Վանդեապուձէի մօտ, Կայլենի ուղղութեամբ դէպի Շիսուկօ, 16 վերստ դէպի արևմուտք Սիւեանից, Դայչժուի և Դաշիչաօի ճանապարհի վրա։ Մեր կորուստները յունիսի 20-ի խուզարկութիւնների մէջ սահմանափակվում են կազմից դուրս եկած մի քանի ձիերով։ Յունիսի 20-ի խուզարկութիւններով յայտնված է, որ Դալինեան լեռնանցքը ամրացնվում է հակառակորդի կողմից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրաման. «1897 թ. հրատարակ. զինուորական ծառայութեան կանոնագրքի 9-րդ յօդուածի հիման վրա, զօրքի և նաւատորմի լրացման համար հարկաւոր մարդկանց թիւը սահմանվում է ամեն տարի օրէնսդրական կարգով. ուստի, հաստատելով այժմ պետական խորհրդում կայացած, զինուորական մինիստրի առաջադրութեամբ, այս տարի զինուորակոչին ենթակայ մարդկանց քանակութեան մասին կարծիքը, հրամայում ենք, կոչել 1904 թ., պահպանելով այն կարգը, որ սահմանված է զինուորական ծառայութեան ընդհանուր կանոնագրութեամբ 1) կայսրութեան բոլոր այն տեղերում, որոնց վրա տարածվում է այդ կանոնագրութեան ոյժը, զօրքը և նաւատորմը լրացնելու համար, չորս հարիւր քառասուն եօթը հազար երեք հարիւր երկու մարդ, հաշուելով այդ թւում և նրանց, որոնց կը տրվեն առաջիկայ զինակոչին, զինուորական ծառայութիւնից ազատող նախկին ժամանակվայ պաշեօնի կոչված բէկրուտային անդօրբագրերը. 2) Տերեկի շրջանի օս ժողովրդից հարիւր մարդ, որ նշանակված է 1890 թ. յունիսի 10-ին Բարձրագոյն հաստատված զինուորական խորհրդի որոշման համաձայն, օսական հեծեալ դիվիզիօնի համար։ Կառավարիչ Սենատը հարկաւոր կարգադրութիւնը կանէ սրա կատարման համար»։ Իսկականի վրա Նորին Կայսերական Բարձրութեան խուկական ձեռքով ստորագրված է «ՆԻԿՕԼԱՅ». Պետերհոֆ, 1904 թ. յունիս 7։

ԼԵԱՕԵԱՆ։ Ցամաք լուր է պատում, որ Վլադիվոստոկի էսկադրան այսօր պատահել է եապոնական էսկադրային Գենդաից դէպի հիւսիս. տեղի է ունեցել տաք կռիւ, որ մեզ համար վերջացել է նպաստաւոր կերպով։ Մանրամասնութիւնները յայտնի չեն։ Օկուի բանակը սկսում է նահանջումը, ըստ երևոյթին կամենալով կենտրօնական Պօրտ-Արտուրի կողմում։ Գինչժուի դիրքի մօտ բերվում են պաշարողական գործիքներ։ Հաղորդում են, որ Նապասակիից նաւերով մեկնել են երկու դիվիզիաներ դէպի պատերազմական բեմը։ Ակնյայտ է, որ Եապոնիան լարում է վերջին ջանքերը։—Օկու և Կուրօկի գեներալները շուտքերը։—Օկու և Կուրօկի գեներալները շուտ-բերած մնացել են մեր զօրքերի ռազմագիտական կեղծ շարժումներով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրաման՝ նաւատորմի մասերի կազմութեան լրացման մասին, Բալտիկ և Սև ծովերի զինուորական նաւահանգիստների մէջ և նաւատորմի պահեստի զինուորների լրացուցիչ զինակոչի մասին. հրամայված է կոչել իսկական ծառայութեան. I) Բալտիկ ծովի զինուորական նաւահանգիստների կարիքների համար, գործադիր զինակոչների կարիքների համար, նաւատորմի պահեստի բոլոր դեռ չը կոչված զինուորներին եւրոպական Ռուսաստանի, բացի Օրենբուրգի և Ֆինլանդիայի նահանգներից. 2) Սեվաստոպոլի նաւահանգստի կարիքների համար, Տաղանրոգի, Բոստովի շրջաններում, Դոնի Զօրքի շրջանի և Խերսոնի նահանգի Ելիսավետգրա-

տի, Ալէքսանդրիսկի, Անանիէվի և Տիրասպոլ գաւառներում հաշուի առնվածներին, նոյն ցուցակի համաձայն։

ՏԵԱՆՑԻՆ։ Կօմանդայի 10 ռուս օֆիցէր և 100 մարդ նստեցին Ինկօում, «Լէյտընանտ Բուրակօվ» հակառականաւի վրա։ Այդ փաստի հիման վրա ենթադրում են, որ Նիւչուանը առանձնացրված է։ Յայտնի չէ ուր է գնում «Լէյտընանտ Բուրակօվը»։

ԳԵԱՆԳՑԷ։ Զինադադարի ժամանակամիջոցը լրանալուց յետոյ պատերազմական գործողութիւնները սկսվեցին։ Անգլիացիները ուրբա կոծեցին տիբետիցիների ամրութիւնները։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

1 յունիսի

Բօրսայի դիսկօնտը	6—7 1/2 %	»
Պետական 4% ռենտան	92 3/8	— »
I Խաղար. տոմսերը	384	— — »
II » »	297 1/2	— »
III » »	274	— — »
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	—	— — »
Բաքուի » » »	—	— — »
Թիֆլիսի հող. բանկի 5%	—	— — »
» » » 4 1/2 %	89 1/2	— »
Բաքուի նաւթ. Ընկ.	460	— — »
Կասպիական Ընկ.	—	— — »
Մանթաշեան և Ընկ.	193 1/2	— »
Նօբէլի և Ընկ.	—	— — »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինօվսկայա փողոց № 8։ 90—100
ԲԺՇԿԱՊԵՏ

Բժշկ. Բ. Նաւասարդեան
որ գտնվում է ՐՕՍՏՕՎ քաղաքում
Հիւանդներին ընդունում է 11—1 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ռ. կ. ե. հ.) 29—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տէր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւնների. ունի բէնդէնեան կաբինէտ. 154. Միքայէլեան պրօսպէկտ, տելէֆօն 825.
(շ. ե. հ. չ.) 51—105

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
(ներքին և ներվային հիւանդութիւններ)
Ընդունում է հիւանդներին Կովկասեան հանքային ջրերում—Պատիգօրսկում. Верхній булваръ, № 14. д. Кн. Гирей. (կ. ե. հ.) 14—20

Արսէն աւագ-քահանայ Բագրատունին խնդրում է մեզ հրատարակել, որ ստացել է Վիէննայից
«ԿԵԱՆՔԸ ԱՌԱՆՑ ՀԱՒԱՏՔԻ»
300 օրինակ գրքեր. հեղինակութիւն Ներսէս վարդապետ Դանիէլեանի, Կ. Պոլիս.
ՅՕԳՈՒՏ ԿԻԼԻԿԻՈՅ ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ
Այդ գրքերը ծախվում են բացառապէս «Գուտտէնբէրգ» գրավաճառանոցում։ (շ. ե. հ.) 3—3

Լոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ
ԱՐՏԱՒԱՆՔ
ԵՐԿՐՈՐԴ
Պատմական ֆէէրիա չորս պատկերով՝
Գինն է 30 կոպէկ։
«ՄՈՒՍԱ» II նուագ, գինն է 20 կոպ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Тифлисъ, Чавчэвадзевская, д. Маркарова № 25а, Арутюну Туманянцу. (կ. հ.) 2—5

Պետերբուրգի Պուշկինեան տպարանում
Լոյս տեսան
Յ. Մ. ՍՈՒՐԽԱԹԵԱՆԻ
1. Մելքօն աղային վերջաբանութիւնը (Դրիսի բարբառով). . . . 20 կ.
2. Փարօսի վրա (փոխադրութիւն, «Մշակից» արտատպած). . . . 5 կ.
Այլ և վաճառվում են նոյն հեղինակի
3. Մելքօն աղային սթօռիան (Դր. բար.). 15 կ.
4. Մի լար... բոմանս նօտագրած՝ երգելու և դաշնամուրի համար . . 60 կ.
Դիմել՝ Харьковъ, А. М. Туманьянцъ, Инструментальный пер., д. № 3, кв. Самуэлянцъ.

Լոյս տեսաւ
ՄՈՒՐԱՑՅԱՆԻ
ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ
որ պարունակում է Նոյի ազուաը, Առաքեալը և Խորհրդաւոր Միանձնուհին. բաղկացած 560 երեսից.
Գինն է 1 ր. 50 կ.
Ներկայ Թւականից սկսած՝ հետզհետէ պիտի հրատարակվեն հեղինակի ճեացեալ աշխատութիւնները, որոնք, լոյս տեսածի հետ միասին, պիտի կազմեն 10 զատ հատոր, իւրաքանչիւրը 500—600 երեսից և որոնց ցուցակը հետաքրքրվողը կը գտնէ առաջին հատորի շապկի վրա։
Բաժանորդագրութիւնը շարունակվում է.
Առաջին 6 հատորների համար։ Բաժնեգինը՝ առանց ճանապարհածախսի և կանխիկ վճարելի՝ վեց ռուբլի, իսկ տպագրութիւնից յետոյ ինն ռուբլի։
Լոյս տեսած հատորը գնել կամ առաջին 6 հատորի համար բաժանորդ գրվել ցանկացողը կարող է դիմել
ԹԻՖԼԻՍՈՒՄ
1) Հեղինակին, 2) Կենտրօնական և 3) Գուտտէնբէրգ գրավաճառանոցները։
ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ
Բաքու պ. Բելլուբէկեանի Справочное бюро-ն։
Գանձակ պ. Յովսէփ Խօջայեանցին։
Շուշի պ. Նիկողայոս Զուլաբեանցին։
Երեւան Արժ. Գարեգին վարդ. Յովսէփեանցին։
Ալեքսանդրօպոլ «Շիրակ» տպարանը—պ. Կարապետ Ափինեանցին։
Կարս պ. Աստուածատուր Բէկ-Յովսէփեանցին։
Ասխաբադ պ. Դանիէլ Տէր-Յովհաննիսեանցին։
Յիշեալ քաղաքների բաժանորդները կարող են ստանալ իրանց հասանելի գրքերը մի և նոյն անձինքներից՝ առանց ճանապարհածախս վճարելու։ (հ. կ.) 2—3

Ս. Յ. ՄԱՏԻՆԵԱՆՑԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ
(Թիֆլիս, Միքայէլ. կամուրջ)
մեծ քանակութեամբ 100,000 պատկերազարդ
ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ
Պարիզից և այլ արտասահմանեան յայտնի ֆաբրիկաներից, արժողութեամբ 2, 3, 5, 8, 10 կոպ. և աւելի թանգ.։ Նորութիւններ ստացվում են անընդհատ։ Զանազան տեսակների թիւն 10 հազարից անցնում է։
Թիֆլիսի և այլ Կովկասեան տեսարաններ և տիպեր մօտ . . . . 300 տես.
Ռուս. և հայոց դերաս. և դերասանուհ. 800 »
» » . . մօտ. 200 »
Գեղեցկուհիներ, երեխ., զան. տիպ. » 2000 »
Ծաղիկներ, տեսար., կենդանիներ » 1500 »
Հոչ. մուղեումների պատ. կոպիներ» 300 »
Պատերազմական դաշտից նաւեր, գեներալներ և այլն » 200 »
և այլն, և այլն, և այլն։
Գումարով գնողներին յայտնի զիջումով։
Պատուէրները կատարվում են անյապաղ վերադիր վճարով։ (հ. շ.) 5—10

Ուշադրութիւն

Երկար ժամանակից ի վեր զգացված մի կարիքը պէտք գոհացնելու դիտումով, բացել ենք Գերմանիայի մայրաքաղաքում ՀԱՅ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԻՒՐՕ։ Սրանով հրաւիրում ենք այն բոլոր անձանց, որոնք առևտրական գործերով, առողջութիւնը դարմանելու համար, կամ մի որ և է ուրիշ նպատակով կը ցանկան Բերլին գալ և կամ որ և է խորհուրդի կը կարօտին, դիմել մեզ։—Երկար տարիներում մեր այստեղ ձեռք բերած փորձառութեամբ պիտի կարողանանք մեծամեծ դիւրութիւններ ընծայել և ամեն կերպով լաւագոյն օգտակար հանդիսանալ մեզ դիմողներին, չնչին վարձատրութեամբ։
Հասցէ. N. Antréassian und Co. Berlin W. 8 Krausenstr. 61. Հեռագրական հասցէ. Levante —Berlin. (կ. հ. կ.) 2—3

ՄԻ ճեմարանաւարտ պատրաստում է աշակերտներ միջնակարգ դպրոցների համար։ Դիմել Մաղաթեան կղզի Ա. Զաղեթեանի դրասենեակ։ շ. կ. ե. հ. 3—4

Ներսիսեան դպրոցի

սան և երաժշտագէտ Եկմալեանի աշակերտներից մէկը ցանկանում է հայոց եկեղեցիներում դպրոցի պաշտօնի տեղ ունենալ. ունի աջող ձայն, գիտէ երգել շարական և կարող է խումբ ևս կառավարել և ունի հինգ տարվայ փորձառութիւն այդ պաշտօնի մէջ։
Հասցէս. Тифлисъ, церковъ сурпъ-Саркисъ, Григору Амираянцу. (կ. ե. հ.) 3—3

Աբիսող. Յովհաննիսեանցը

տալիս է դասեր և օգնում է դաս պատրաստելիս թէ մաթեմատիկայից և թէ ֆիզիկայից։
Աբաս-Աբադեան հրապարակ, տուն Շանշեանցի։ ե. հ. շ. 5—5

Ներսիսեան դպրոցական

դպրոցաւարտ, ցենզաւոր հայ ՈՒՍՈՒՑԻՉ կամենում է ստանձնել ուսուցչական պաշտօն. գիտէ եկեղեցական երգեցողութիւն։ Դիմել՝ Кишиневъ, Армянская, 82. Арутюну Ордуянцу. (ե. հ. շ.) 2—6

Գուտտենբերգ գրավաճառանոցում վաճառվում են

Տնային տնտեսութիւն, հայ կանանց համար, Մ. Մամուրեանի կազմ.	1 —
Գործնական քերականութիւն ֆրանսերէն լեզուի, Անի ոճով Թովմաս Թէրզեանի.	— 80
Գար. Ե. Սրուանձտեանի Երկասիրութիւնները, ա. համով—հոտով, հեղինակի պատկերով.	1 25
Դպրութիւն կամ նոր մեթոդ զրուցատրական ուսման ֆրանսերէն լեզուի, Ե. Տ. Յովհաննիսեանի, կազմած	2 —
Առևտրական-Տնտեսական աշխարհ, Կ. Ս. Թուխմանեանի կազմած.	1 50
Ընկերային նամականի, ուղղեալ առ երիտասարդս, առ օրիորդս և առ նորապսակ ամուսինս.	— 80
Դիւան հայոց պատմութեան, գիրք Զ. Դաւիթ կաթողիկոս, մասն I հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց.	4 —
Հրահանգ անգլիերէն լեզուի հայր Իսավերդեանցի 2 հատոր.	2 —
Իրաւաբանութիւն կամ տղայոց աչքն ու ականջը կրթելու եղանակ, թարգմ. Մ. Մամուրեանի	1 —
Պատմութիւն օսմանեան պետութեան, Միքայէլ Ասճեանի, մասն I և II.	1 —
Գեղունի, 1903 թ. պատկերազարդ	4 50
Բարեբաղդ մարդիկ, Գ. Բարխուդարեանի.	— 60
Բաժանորդագրութիւն, Լէօ «Գրիգոր Արծրունի», կազմած.	4 —
» Յ. Դաղբաշեանի Ռուսերէն-հայերէն բառարան, պօստի ծախքով.	7 —
» » Հայերէն-ռուսերէն բառարան.	4 —
» Մուրացանի Երկասիրութիւնների, 6 հատոր.	6 —
» Հանրագիտական բառարանի Հ. Առաքելեանի կազմած.	5 —
» Շիրվանզադէի երկերի, 4 հատոր.	4 50

Գումարով գնողներին տրվում է բաւարար զիջում։
Դիմել. Тифлисъ: Книжный магазинъ „Гуттенбергъ.“ 1—2

Կենտրօնական Գրավաճառանոցում վաճառվում են

հետևեալ նոր գրքերը՝
Աղանեան Գ. ա.-ք., Դիւան Հայոց պատմութեան գիրք Զ.—Դաւիթ կաթուղիկոս մասն ա. 1809—2, Թիֆլիս 1904 թ., գ. 4 ր., Գիրք Ե.—Դանիէլ կաթուղիկոս—4 ր., Գիրք Դ.—Ղուկաս կաթուղիկոս—4 ր., Գիրք Գ.—Սիմէօն կաթուղիկոս—7 ռ., Գիրք Ա.—Բ.—Դիւան Հայոց պատմ. 1780—1834, 2 ր.։
Այվազեան Բ., Աշոտ Երկաթ, պատմական վէպ (913—928 թ. Ք.) ա. և բ. մասն, գ. տիպ, Թիֆլիս, 1904 թ. գ. 1 ր.։
Մուրացանի երկասիրութիւններ, հատոր առաջին. Նոյի ազուաը, Առաքեալը, Խորհրդաւոր միանձնուհի, Թիֆլիս, 1904 թ. գ. 1 ր. 50 կ.։
Զիւանու քնարը—Լիակատար հաւաքածու, ոտանաւոր և արձակ (հեղինակի պատկերով), Սրուանձտեան Գար. եպս., Համով—հոտով, հատոր ա., հեղինակի պատկերով, Թիֆլիս, 1904 թ. գ. 1 ր. 25 կ.։
Պռօշեանց Պ., Հացի խնդիր, վէպ., բ. տիպ, Բագու, 1904 թ. գ. 1 ր. 50 կ.։
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (Հ. շ.) 5—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ, Сололаки, Лермонтовская ул., № 9)

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական Թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուահակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Զրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտօվսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (կ. չ.) 2—25

ԿԱՐՄԵԼԻՏԵԱՆ ՋՈՒՐ
(Eau des Carmes). BOYER (Բուայիէ) (Eau des Carmes).



Համեղ է, ջղային հիւանդութիւնների ժամանակ հանգստացուցիչ կերպով է ներգործում։ Շաքարի կտորի վրա կամ մի գդալ կօֆէի հետ մի քանի կաթիլ՝ կերակրից յետոյ ընդունած՝ գրգռիչ կերպով է ազդում ստամոքսի նեարդերի և մկանների թուլութեան դէպքում։ Ծախվում է բոլոր լաւագոյն դեղատներում։ (մ. 27, յ. 15) 3—3

ՊԱՀԵՍՏ
Լամպերի, պատառների եւ մեքենայի
Ե. Յ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ
Թիֆլիս, Դվօրցօվայա փող.
55000
Կտոր պաստառներ զանազան գոյների և ոճի անցեալ 1903 թւականից մնացած վաճառվում է 30% մինչև 60% զիջումով ծախու գնից։
Օտարաքաղաքացիների պատուէրները շուտափոյթ կը կատարվեն ամենաճշգրտութեամբ, միայն խնդրվում է ուղարկել սենեակների հիշդ չափը։
Հեռախօս № 238. (24 յ. 18 օ. 1, 22)

Дозволено Цензурою. Тифлисъ, 22-го іюня 1904 г. Ցպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81